ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Երաժշտություն>>առարկայի / 6 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերը ընդունվում են 2025 թվականի հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ը՝ ներառյալ, ամեն օր `ժամը 10.00-ից 14.00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի հուլիսի 3-ին, ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշենի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճաշեն, 24-րդ փողոց, 1-ին նրբանցք, N:3 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-50-27-47 հեռախոսահամարներով: